12, իւր չքաւոր աղգականներին՝ լսկանէ լանուանէ մասնատրել է 20,000 ռուբլի։ Եւ այլն։

---

## ՄԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ

Ներկայումս ս. Էջմիածնի մի քանի սարկաւագներ ուսանում են Ռուսաստանի այս և այն համալսարաններում։ Դոցանից Ս. Պ. Բուրդի համալսարանի ուսանող Սմբատ սարկաւագին համալսարանի վարչութիւնը անցեալ ամառ ուղարկել էր Պարսկաստան զանազան հետազօտութիւններ կատարելու համար։ Շնորհալի սարկաւագը վերադա ձաւ անցեալ նոյեմբեր ամսին, տանելով իւր հետ մի քանի արկղ իւր ժողոված հնութիւններն ու նիւթերը և օգտուելով այդ առաքելութիւնից՝ սարկաւագը կազմել է մանրամասն ցուցակ Պարսկաստանի մեր նշանաւոր վանքերի ձեռագրների։ Ցուսանք, որ այդ նիւթերը մօտիկ ապագայում հրատարակուած կտեսնենք և հասարակութեան սեպհականութիւն դարձած։

---

## ԿԱՐՍԻ ՆՈՒԱՃՄԱՆ ՔՍԱՆՈՒՀԻՆԳԱՄԵԱԿԸ

Նոյեմբերի 6-ին քսանուհինգ տարի լրացաւ այն օրից երբ ռուսական լաղթական զօրքը առաջնորդուած ըստ մեծի մասին հայ քաջարի զօրապետներով, մուտք գործեց տաճկական անառիկ համարուած Կարս բերդաքաղաքը։

Աղէքսանդր II ազատարար կայսրը այլ ևս չհանդուրժելով քրիստոնեաների հալածանքին Տաճկաստանում պատերազմ հրատարակեց Թուրքիային. հարիւր հազարաւոր ռուս զինուորների թափուած արիւնով ազատութիւն ստացան մի քանի քրիստոնեայ ազգեր և անկախ պետութիւններ դարձան։ Սան-Ստէֆանոյի դաշնադրութեամբ, որի 16-րդ յօդուածը վերաբերում էր հայերին, խաղաղութիւնը վերականգնելուց յետոյ ռուսները թողին Էրզրումը. իսկ Բերլինի վեհաժողովում Սան-Ստէֆանոյի դաշնադրութեան 16-րդ յօդուածը փոփոխութիւն կրելով՝ կազմեց վեհաժողովի 61-րդ յօդուածը, որ ցայժմ անիրագործելի թողեց Տաճիկ կառավարութիւնը։

Կարս քաղաքը մեծ չքով տօնեց տաճիկ կառավարութեան լուծը թօթափելու քսանհինգամեակը և հիմք ձգեց մի արձանի, որ նուիրուած կլինի անմատչելի բերդաքաղաքի նուաճման լիշատակին։

Նոյն օրը հայ հոգևորականութիւնը հանդիսաւոր հոգեհանդիստ կատարեց Վանաց մայր եկեղեցու զաւթում հողին յանձնուած վերջին ռուս տաճկական պատերազմի հերոսների դերեզմանների վրայ։ Լոռու-Մելիքեանի, Տէր-Ղուկասեանի,